Կենսաթոշակային բարեփոխումներ՝ ամենամոտ ապագայում

2010թ. տարեվերջին՝ դեկտեմբերի 23-ին, ՀՀ Ազգային ժողովն ընդունեց կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների փաթեթը, համաձայն որի նախատեսվեց 2011-ից կիրառել կենսաթոշակի կամավոր կուտակային, իսկ 2014-ից՝ պարտադիր կուտակային համակարգ: Որո՞նք են դրանց առավելությունները:

Զրուցում ենք սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Արտեմ ԱՍԱՏՐՅԱՆԻ հետ:

- Պարոն Ասատրյան, կենսաթոշակային այս բարեփոխումները գործող համակարգից ինչո՞վ են լավը:

- Այս բարեփոխումներով Հայաստանը կենսաթոշակային միաստիճան համակարգից անցավ բազմաստիճանի: Սա նշանակում է, որ սերունդների համերաշխության սկզբունքով կենսաթոշակային համակարգը (բաշխողական, որի դեպքում կենսաթոշակ է հատկացվում պետական բյուջեից) պահպանվում է: Դրան ավելանում են ևս երկու բաղադրիչներ՝ կամավոր-կուտակայինը և պարտադիր-կուտակայինը: Կամավոր կենսաթոշակային ապահովագրությունն ապահովող դրույթները 2011 թ. արդեն ուժի մեջ են մտել: Այժմ ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը մշակում են համապատասխան ենթաօրենսդրական ակտերը: Այնուհետև կգործարկվի կամավոր կենսաթոշակային համակարգը:

- Դա ի՞նչ կտա հանրությանը:

- ՀՀ-ում բնակվող յուրաքանչյուր քաղաքացի կարող է ցանկության դեպքում իր աշխատանքային եկամուտներից որոշակի միջոցներ փոխանցել կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգին և կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո տնօրինել այդ կուտակած միջոցները՝ որպես լրացուցիչ կենսաթոշակ: Ձևավորվելու են ֆինանսական համապատասխան ինստիտուտներ, կենսաթոշակային ֆոնդեր, ակտիվները կառավարող ընկերություններ, շահառու բանկեր, որոնք իրականացնելու են կամավոր կենսաթոշակային ապահովագրության աշխատանքները, առաջարկելու են համապատասխան կենսաթոշակային ապահովագրության սխեմաներ՝ համապատասխան պայմաններ, թե ինչ ժամանակահատվածում որքան վճարումներ կատարել:

Աշխատող քաղաքացին իր կամքով կարող է կենսաթոշակային որևէ ֆոնդի հետ պայմանագիր կնքել և կատարել կամավոր կուտակային վճարներ: Պայմանագրով նախատեսվում են վճարումների չափը, ժամանակահատվածը, որի շրջանակներում պայմանագրային մի կողմը, օրինակ վարձու աշխատողը, պարտավորվում է կատարել այդ վճարումները, որպեսզի հետագայում ստանա լրացուցիչ կենսաթոշակ՝ ի հավելումն պետական կենսաթոշակի: Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում գործատուն ևս կարող է պայմանագիր կնքել և իր աշխատողի համար լրացուցիչ վճարում կատարել:

- Որքանո՞վ է հավանական, որ աշխատողն ու գործատուն կամավոր վճարումներ կկատարեն:

-Որպեսզի կամավոր կուտակային համակարգը մեր երկրում սկսի աշխատել, ընդունված օրենքների փաթեթում համապատասխան դրույթներ ենք ներառել: Առաջիկա երեք տարիներին նախատեսվում են հարկային արտոնություններ թե գործատուների, թե վարձու աշխատողների համար: Եթե իրավաբանական անձը իր եկամտի 5 տոկոսի չափով վճարում է կատարում, դա ենթադրում է նվազեցում՝ շահութահարկի բազայից, իսկ վարձու աշխատողների համար՝ եկամտահարկի բազայից:

- Պարտադիր կուտակային համակարգը ի՞նչ նորամուծություններ է ենթադրում:

-Այն նախատեսվում է գործարկել 2014 թ., պետք է մասնակցեն մինչև 40 տարեկան անձինք՝ պարտադիր կերպով: 40-ից բարձր տարիքի անձինք՝ ցանկության դեպքում: Սա ենթադրում է, որ անձն իր աշխատանքային գործունեության ընթացքում օրենքով սահմանված չափով և կարգով կատարում է պարտադիր կուտակային վճարներ: Կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձը հնարավորություն է ստանում տնօրինելու իր իսկ կուտակած միջոցները: Կուտակային վճարի չափը կկազմի 10 տոկոս, որից 5տոկոսը կվճարի անձը, մյուս 5 տոկոսը՝ պետությունը, սակայն առավելագույնը՝ 25 հազար դրամ: Այսինքն 500 հազար դրամից բարձր աշխատավարձի դեպքում աշխատողի կողմից կլինի ավելի բարձր վճար, քան պետության կողմից համաֆինանսավորումը:

-Այն երկրները, որոնք ճիշտ չեն հաշվարկել կենսաթոշակային բարեփոխումները, համակարգը ձախողել են: Հայաստանում դրանք որքանո՞վ են ճիշտ հաշվարկված:

-Կենսաթոշակային համակարգերի բարեփոխումներն ամբողջ աշխարհում համարվում են բարդ գործ, քանի որ առնչվում են երկրի սոցիալ-տնտեսական բոլոր բնագավառներին: Տարբեր բնագավառներում գործող չափանիշների, սկզբունքների հետ փոփոխությունների է ենթարկվում նաև մարդկանց հոգեբանությունը: Գլոբալ առումով սա լրջագույն բարեփոխում է, ենթադրում է նաև պատրաստվածություն, բոլոր ռիսկերի վերհանում, դրանց գնահատում: Գործող կենսաթոշակային համակարգն այս վիճակով պահպանել չէր կարելի, անհրաժեշտ էին փոփոխություններ: Սրանում բոլորը համակարծիք էին: Իսկ թե ինչ փոփոխություններ էին պետք իրականացնել՝ 3-4 տարիների ընթացքում կատարված աշխատանքների, քննարկումների, վերլուծությունների արդյունքն է: Մեկ օրում որոշում չի կայացվել, որ այս համակարգը փոխում ենք սրանով: 2009 թվականի կեսից սկսած՝ իրականացվել են օրենքների նախագծերի մշակում, բարեփոխումների ռազմավարություն: Կա կառավարման խորհուրդ (վարչապետի որոշմամբ ստեղծված), որում ընդգրկված են պետական կառավարման բոլոր շահագրգիռ մարմինների ներկայացուցիչները, մեզ աջակցել են նաև ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, Համաշխարհային բանկը, այսինքն նաև այլ երկրների փորձագետներ են ընդգրկվել այս աշխատանքներում: Մեկուկես տարի էլ

տևեց օրենքների նախագծերը վերջնական տեսքի բերելը, ԱԺ-ում քաղաքական ուժերի հետ քննարկելը: Կեսաթոշակային բարեփոխումների վերջնական տարբերակի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար քննարկումներ եղան վարչապետի և նախագահի մասնակցությամբ: Կարծում եմ՝ չի սխալվում նա, ով ոչինչ չի անում:

-Այդ բարեփոխումներով կենսական ի՞նչ խնդիրներ ենք լուծում:

-Նախ՝ պահպանում ենք պետական սոցիալական պաշտպանության համակարգը. սահմանված է թիրախային ցուցանիշ, որ այս համակարգով պետք է ապահովենք առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի չափով կենսաթոշակ, ինչն այսօր չունենք: Այսօր կենսաթոշակառուների կեսից ավելին ստանում է այդ ցուցանիշից ցածր կենսաթոշակ: Նոր համակարգի ներդրումը կարևորագույն ձեռքբերում եմ համարում: Կենսաթոշակառուն կկարողանա սոցիալական նվազագույն խնդիրներ լուծել: Երկու ենթակառույցների ներդրման աշխատանքներն են իրականացվում: Տնտեսավարող սուբյեկտներն իրենց հաշվետվությունները այսուհետ ներկայացնելու են էլեկտրոնային ձևով: Սա ենթադրում է, որ յուրաքանչյուր քաղաքացի կիմանա, թե գործատուն ինչ տեղեկություն է իր մասին տալիս: Վաղը եթե այդ քաղաքացին կենսաթոշակի անցնի, ինչ տվյալների հիման վրա է թոշակ ստանալու: Այսօր գործող համակարգում մենք ունենք լրջագույն խնդիր: Ստաժի վերաբերյալ կեղծ տեղեկանքները վերահսկելը շատ դժվար է:

-Կենսաթոշակների վճարման չարաշահումների առումով նշել էիք, որ դրանք դժվար է եղել բացահայտել հստակ տեղեկատվական բազայի բացակայության պատճառով:

-Խնդիրները, որոնք առաջացել են կապված մահացած անձանց, անճշտությունների հետ, տեղեկատվական բազայի ոչ լիարժեք լինելու պատճառով էին: Հանգուցալուծումը մեկն է՝ հստակ ենթակառույցների ձևավորում, տեղեկատվության փոխանակում, որպեսզի բացառենք սուբյեկտիվ միջամտությունը: Այսինքն դա կախված չլինի անձից, անձի ցանկությունից: Այսօր խնդիր է նաև այն, որ անձը կենսաթոշակ ստանալու համար չի կարողանում համապատասխան տեղեկանքներ ներկայացնել, քանի որ այն կազմակերպությունները, որտեղ աշխատել է, փակվել են կամ լուծարվել: Այսուհետ նման տեղեկատվություն կտրամադրի սոցիալական ապահովության ծառայությունը:

-Տեղեկատվական բազայի ստեղծում, օրենքների լիարժեքություն ու վե՞րջ, պատրաստ ենք համակարգի ներդրմա՞նը:

-Ոչ, երրորդ հիմնական խնդիրն էլ կա, որ պետք է լուծենք: Դա հանրային իրազեկման, հանրային կրթության և ուսուցման ծրագրի իրականացումն է: Որքան էլ շատ աշխատանքներ տանենք, լիարժեք օրենսդրություն ստեղծենք, միևնույն է՝ եթե մեր քաղաքացիները տեղյակ չլինեն իրենց իրավունքների, պարտականությունների մասին, հաջողության չենք հասնի: Այդ առումով մենք ունենք արդեն մշակված ծրագրի նախագիծ, որը ենթադրում է իրազեկում բոլոր գործընթացների վերաբերյալ:

Իրազեկման կարիք ունեն հատկապես երիտասարդները, որոնք մինչև 40 տարեկանը պետք է մասնակցեն պարտադիր կուտակային համակարգին:

-Վերջերս մեծ աղմուկ բարձրացավ թոշակների բաշխման առնչությամբ: Ի՞նչ լուծում գտաք:

-Վճարող կազմակերպության առումով փոփոխություններ տեղի ունեցան: Կառավարության որոշմամբ լուծարվեց մեր հիմնադրամի վճարային ծառայությունը: Բայց այդ փոփոխությունները սահուն անցկացնելը որոշակի դժվարությունների, դիմադրությունների հանդիպեց: Ամեն դեպքում այսօր խնդիրները հիմնականում կանոնակարգված են: Քաղաքացին իրավունք ունի որոշելու, թե կենսաթոշակն ինչպես է ուզում ստանալ՝ կանխի՞կ, թե անկանխիկ: Անկանխիկ եղանակով կենսաթոշակն ստանալու համար քաղաքացին պետք է ընտրի որևէ բանկ, որը պայմանագիր է կնքել լիազոր մարմնի հետ և կենսաթոշակառուներին այդպիսի ծառայություններ է մատուցում: Կանխիկի դեպքում նախատեսվում է կենսաթոշակն ստանալ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով:

-Բայց կեղծիքներ հայտնաբերվեցին նաև այդ կազմակերպություններում:

-Այո, պարզվեց, որ դիմումներ են ներկայացվել նաև մահացած և երկար ժամանակ հանրապետությունից բացակայող անձանց անունից: Վարչապետն իրավապահ մարմիններին հանձնարարական է տվել, գործընթացն այժմ ուսումնասիրվում է: Կառավարության որոշմամբ ժամանակավորապես կասեցվեց վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից կենսաթոշակ վճարելը: Կանխիկ եղանակով թոշակ վճարում է միայն «Հայփոստ» կազմակերպությունը: Ապրիլի կենսաթոշակներն սկսվել են վճարվել նաև մյուս բանկերի միջոցով, որոնցից կենսաթոշակ ստանալու ցանկություն են հայտնել կենսաթոշակառուները: Սա անկանխիկ համակարգով կենսաթոշակների վճարումների իրականացման առաջին փորձն էր: Այս ընթացքում բավականին նախապատրաստական աշխատանքներ են արվել, որպեսզի հնարավոր դժվարությունները բացառենք: Առաջիկա օրերին, երբ արդյունքներն ամփոփվեն, մեզ համար վիճակը պարզ կլինի:

-Սոցիալական ապահովության ոլորտում կատարվող այս բարեփոխումները ե՞րբ կհանգեցնեն կենսաթոշակային լուրջ համակարգի կայացմանը, աղքատության և գործազրկության նվազմանը:

-Սոցիալական պաշտպանության համակարգը երբևէ չի կարող ամբողջությամբ, 100 տոկոսով բոլոր խնդիրները լուծել: Մեր երկրում առաջին հերթին լուծվում է աշխատունակ անձանց զբաղվածության հարցը: Բայց կարևոր է նաև անկարողունակ՝ տարեց կամ հաշմանդամ քաղաքացիներին սատարելը: Եթե ունենք որոշակի ակտիվ ծրագրեր, ապա պետք է փորձել նրանց ներառել այդ ծրագրերում, ոչ թե ուղղակի տրամադրել նպաստ կամ կենսաթոշակ: Եվ ամենակարևորը՝ սոցիալական աշխատանքի միջոցով ուղղորդելով, հաշվի առնելով քաղաքացիների կարիքները՝ գնահատել նրանց կարողությունը, ուղղորդել, որպեսզի ստանան համապատասխան սոցիալական ծառայություններ: Այդ առումով, կարծում եմ, մեր սոցիալական պաշտպանության համակարգը դեռևս կատարելագործման

անհրաժեշտություն ունի: Այս բարեփոխումները դրան են միտված: Առաջիկա մեկ տարվա ընթացքում, ըստ իս, սոցիալական պաշտպանության ոլորտում լավ արդյունքներ կունենանք: Այնպիսի մթնոլորտ պետք է ստեղծենք, որ մարդիկ հասկանան՝ սոցիալական ծառայողները միմիայն ծառայություն մատուցելու համար են:

Լիլիթ Հովհաննիսյան, «Հայաստանի զրուցակից», 08.04.2011 թ.